

- **Օրիգենես Ալեքսանդրացի** (յուն.՝ *Órigénês Alexandreús*, 185 – 254 թ.), որ աշակերտած է վերոյիշեալ *Կղեմէս Ալեքսանդրացիին* եւ եղած՝ Պլատոնականութեան (Platonism) մեծ ջատագովը: Հեղինակ է աստուածաշնչեան մեկնութիւններու բազմաթիւ երկերու, որոնց բովանդակութիւնը, մասամբ, վիճելի էին Կաթոլիկ Եկեղեցւոյ համար: Օրիգենէսի մահէն ետք (մասնաւոր՝ 4-րդ միւնչեւ 6-րդ դարերուն), կը շարունակուին իր կարգ մը գաղափարներուն շուրջ յարուցուած վիճաբանութիւնները: «Ադամանտիոս» (*Adamantios* = ադամանդեայ) անուանեալ այս փիլիսոփայ աստուածաբանը պէտք չէ շփոթել իրեն անուանակից ու ժամանակակից հեթանոս փիլիսոփայ *Օրիգենէսի* հետ, որ 268 թուականին մահացած Նոր-Պլատոնականութեան հետեւող փիլիսոփայ մըն էր:
- **Եւսեբիոս Կեսարացի** (յուն.՝ *Eusébios*, 260 – 340 թ.), որ որպէս նշանաւոր պատմաբան - աստուածաբան գրած է ընդհանրական Եկեղեցւոյ սկզբնական շրջանի պատմութիւնը: Պատմական գրութիւններէն մաս մը, առկայ է միայն՝ 6-րդ դարու հայերէն թարգմանութեամբ, որոնցմէ մեծապէս օգտուած են Նաեւ հայ պատմաբանները: Եւսեբիոս, 313 թուականին ընտրուած է Կեսարիոյ եպիսկոպոս: 325 թուականին ան կը մասնակցի Տիեզերական առաջին ժողովին՝ Նիկիոյ մէջ: Հեղինակ է պատմական եւ կրօնական բազմաթիւ երկերու:
- **Գրիգոր Նիւսացի** (յուն.՝ *Grêgórios Nýsses*, 335 – 394 թ.), որ եղած է իր ժամանակի նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբաններէն մէկը: Կեսարիոյ եպիսկոպոս Բարսեղ Կեսարացիի կրտսեր եղբայրն է: Իր եղբոր կարգադրութեամբ կը դառնայ եպիսկոպոս Սեբաստիոյ եւ հայաբնակ Նիւսսա քաղաքին: Գրիգոր Նիւսացի, իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Նաեւ 381 թուականին գումարուած Տիեզերական երկրորդ ժողովին, որ Նաեւ կը կոչուի Կոստանդնուպոլսոյ առաջին ժողով: Պաշտպան Երրորդութեան հաւատքին ու ընդդիմադիր՝ Արիոսականութեան (Arianism), որ Որդի Աստուածը եւ Հոգի Աստուածը համագոր չէր նկատեր Հայր Աստուծոյ հետ: Ան սրբադասուած է թէ՛ Հայ եւ թէ՛ ընդհանրական եկեղեցիներուն կողմէ: *Գրիգոր Նիւսացի*, եղբայրը *Բարսեղ Կեսարացի* (*Basilios of Caesarea*, 330 – 379 թ.) եւ ասոնց ընկերն ու գործակիցը՝ *Գրիգոր Նազիանզացի* (*Gregory of Nazianzus*, 329 – 390 թ.) կը կազմեն Կապադովկիացի 3 նշանաւոր *Եկեղեցւոյ Հայրերը*, որոնք անուղղակիօրէն կ'առնչուին Ալեքսանդրիոյ աստուածաբանական դպրոցին:
- **Ամբրոսիոս Միլանեցի** (լատ.՝ *Ambrosius*, 339 – 397 թ.), որ եղած է Կաթոլիկ Եկեղեցւոյ սկզբնական շրջանի չորս սրբադասուած *Եկեղեցւոյ Հայրերէն* առաջինը (միւս երեքն են՝ Հիերոնիմոս, Օգոստինոս Երանելի եւ Մեծն Գրիգոր Ա. Պապը): Ամբրոսիոս, որ նշանաւոր քաղաքագետ մըն էր, նշանակուած է հիւսիսային Իտալիոյ Միլան քաղաքի եպիսկոպոս, ուր 387 թուականին, քրիստոնեայ մկրտած է *Օգոստինոս Երանե-*